ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ԹԻՎ 2 ՆԻՍՏԻ

Ք. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ
15.02.2024Թ.

Համայնքի ավագանու նիստի աշխատանքների ներկա են ավագանու 25 անդամները, բացակայում են Տարոն Եփրեմյանը և Գառնիկ Սահակյանը-:
Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում են՝

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ս.Վարդանյանը, աշխատակազմի քարտուղար Ս.Մուրադյանը, համայնքապետարանի աշխատակազմի բաժինների պետեր Վ.Բարսամյանը, Բ. Բալբաբյանը, Ա.Զաքարյանը, Գ.Աֆյանը, Ա. Ծերունյանը, Ս.Բալաբեկյանը և գյուղերի վարչական ղեկավարները:

Նիստը վարում է Չարենցավան համայնքի ղեկավար_Հ. Շահգալդյանը:

Աշխատակազմի քարտուղար Ս.Մուրադյանը ի գիտություն ներկայացրեց նախորդ նստաշրջանից ավագանու անդամների բացակայության վերաբերյալ տեղեկատվություն:

Հայտարարեց նաև, որ «Ապրելու երկիր» խմբակցության քարտուղար Դավիթ Պապոյանը դուրս է եկել խմբակցությունից և շարունակում է մնալ ավագանու կազմում որպես անկախ անդամ, իսկ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունում փոխվել քարտուղարը Արշակ Խաչատրյանի փոխարեն այժմ քարտուղար է նշանակվել Նարեկ Բաբայանը:

<u>Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան</u>

Ձեզ եմ ներկայացնում Չարենցավան համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի հերթական թիվ 2 նիստի օրակարգը:

1) Չարենցավան համայնքի սեփականության 2023 թվականի ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:
2) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 104-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
3) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 20-ի N 98-Ն որոշումը չեղյալ ճանաչելու մասին:
4) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքում տեղական տուրքերի 2024 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին:
5) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 20-ի N 99-Ն որոշումը չեղյալ ճանաչելու մասին:

6) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքում տեղական վճարների 2024 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին:
7) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 20-ի N 101-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
8) Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:
9) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին:
10) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանները նվիրատվության եղանակով վարձակալին օտարելու համաձայնություն տալու մասին:
11) Քաղաքացի Կարեն Գալստյանին հողի հարկի արտոնություն տալու մասին:
12) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքում նոր առաջացած փողոցը հասցեավորելու մասին:
13) Եվրամիության (ԵՄ) կողմից իրականացվող EU4CULTURE նախագծի շրջանակներում Չարենցավան համայնքի «Արամ Խաչատրյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի կողմից ներկայացված «Արվեստի ամառային ճամբար» (ART SUMMER CAMP) դրամաշնորհային ծրագրի՝ համայնքի բյուջեից վերադարձի պայմանով համաֆինանսավորմանը համաձայնություն տալու մասին:
14) Եվրամիության (ԵՄ) կողմից իրականացվող EU4CULTURE ծրագրի Առաջարկների Սահմանափակ Կանչին մասնակցելուն, ներկայացվող ծրագրի իրականացումը պատվիրակելուն և համաֆինանսավորումն ապահովելուն համաձայնություն տալու մասին:
15) Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի հերթական թիվ 3 նիստի գումարման օրը սահմանելու մասին:

<u>Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան՝</u>

Եթե առարկություններ չկան, քվեարկության եմ դնում որոշումը՝ օրակարգային հարցերի վերաբերյալ:

Կողմ- 15 դեմ - 0 ձեռնպահ -10

Օրակարգն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

1. Չարենցավան համայնքի սեփականության 2023 թվականի ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:

/Զեկ. Գ.Աֆյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետով, 77-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով՝ ***առաջարկում եմ.***

1. Հաստատել Չարենցավան համայնքի սեփականության 2023 թվականի ամենամյա գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու ֆինանսաբյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Ավագանու անդամ Նորիկ Վարդանյանը, հարց բարձրացրեց գույքագրման փաստաթղթերի ոչ ամբողջական լինելու վերաբերյալ, Բ.Բալբաբյանը պատասխանեց, որ փաստաթղթերի վերաբերյալ բոլոր նկատառումները հաշվի կառնվեն և արդյունքները կներկայացվեն ավագանու անդամներին:

Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան՝
Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 15 **դեմ-2** **ձեռնպահ-8**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.
2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 104-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

/Զեկ. Գ.Աֆյան/

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներով՝ հաշվի առնելով, որ Չարենցավան համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատվել է 2023 թվականի դեկտեմբերի 20-ին և չի արտացոլվել 2024 թվականի տարեսկզբի պարտքերը և բյուջեի վարչական ու ֆոնդային մասերի ազատ մնացորդները՝ ***առաջարկում եմ.***

1. Չարենցավան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 20-ի «Չարենցավան համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 104-Ն որոշման հավելվածի 1- 6 հատվածներում կատարել փոփոխություններ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու ֆինանսաբյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան՝

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 25 դեմ- 0 ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 20-ի N 98-Ն որոշումը չեղյալ ճանաչելու մասին:

/Զեկ. Ս.Մուրադյան/

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 38.1-րդ հոդվածի, ***առաջարկում եմ.***

1. Չեղյալ ճանաչել Չարենցավան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքում տեղական տուրքերի 2024 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին» N 98-Ն որոշումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու ֆինանսաբյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Քննարկում ծավալվեց նախագծի շուրջ, հնչեցին պարզաբանումներ:

Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան՝

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 20 դեմ- 1 ձեռնպահ-4

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

4. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքում տեղական տուրքերի 2024 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին:

/Զեկ. Ս.Մուրադյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 8-րդ, 9-րդ, 11-րդ և 12-րդ հոդվածներով, ***առաջարկում եմ.***

1. Սահմանել ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքում (այսուհետ՝ Չարենցավան) տեղական տուրքերի 2024 թվականի հետևյալ դրույքաչափերը համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու ֆինանսաբյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

<u>Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան</u>՝

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-21 դեմ- 0 ձեռնպահ-4

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

5.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 20-ի N 99-Ն որոշումը չեղյալ ճանաչելու մասին:

/Զեկ. Ս.Մուրադյան/

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 38.1-րդ հոդվածով, ***առաջարկում եմ.***

1. Չեղյալ ճանաչել Չարենցավան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքում տեղական վճարների 2024 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին» N 99-Ն որոշումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու ֆինանսաբյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

<u>Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան</u>՝

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 25 դեմ- 0 ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

6.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքում տեղական վճարների 2024 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին:

/Զեկ. Ս.Մուրադյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 9-րդ, 11-րդ և 12-րդ հոդվածներով, ***առաջարկում եմ.*** սահմանել Չարենցավան համայնքում տեղական վճարների 2024 թվականի հետևյալ դրույքաչափերը՝ համաձայն հավելվածների:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու ֆինանսաբյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան՝

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 25 դեմ- 0 ձեռնպահ-0

Լսեցին.

7. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 20-ի N 101-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

/Զեկ. Ս.Մուրադյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Համայնքային ծառայության մասին» օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով ՀՀ Կոտայքի մարզպետի 05.02.2024 թվականի N 01/05/00900-2024 գրությունը, ***առաջարկում եմ.***

1. Չարենցավան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 20-ի N 101-Ա որոշման հավելված 2-ի 49-րդ տողի «Հաստիքային միավորը» սյունակի «3» թիվը փոխարինել «2,5» թվով, «աշխատավարձի չափը» սյունակի «480000» թիվը փոխարինել «400000» թվով:
2. Չարենցավան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 20-ի N 101-Ա որոշման հավելված 2-ի 33-րդ տողի «աշխատավարձի չափը» սյունակի «240000» թիվը փոխարինել «166583» թվով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու իրավա-հասարակական հարցերի մշտական հանձնաժողով հանձնաժողովը տվել է բացասական եզրակացություն:

Աշխատակազմի քարտուղար Ս Մուրադյանը, նախագծի շրջանակներում ավագանու անդամներին ներկայացրեց՝ Կոտայքի մարզպետի գրությունը՝ ի կատարումն ՀՀ ՏԿԵ նախարարի՝ 01.02.2024թ. № ԳՍ/15.4/3131-2024 հանձնարարականի, որը վերաբերվում է համայնքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակով նախատեսված ՔԿԱԳ գործառույթներ իրականացնող համայնքային ծառայողի պաշտոնային դրույքաչափի համապատասխանեցումը ՀՀ կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 16-ի N 1531-Ն որոշման 5-րդ կետի 1-ին ենթակետի պահանջների ապահովման անհրաժեշտությանը:

Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան՝

Կողմ- 15 դեմ- 10 ձեռնպահ-0

Լսեցին.

8. Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:

/Զեկ. Ա.Զաքարյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հաշվի առնելով Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի 3-րդ թաղամասի 40-րդ շենքի 19-րդ բնակարանի բնակիչ **Մարիամ Հարությունյանի** 2024 թվականի փետրվարի 06-ի թիվ 567-16, Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի 3-րդ թաղամասի 38-րդ շենքի 10-րդ բնակարանի բնակիչ **Սոս Գրիգորյանի** 2024 թվականի հունվարի 17-ի թիվ 237-16 և Չարենցավան համայնքի Բջնի գյուղի 14 փողոցի 1-ին նրբանցքի 2-րդ փակուղու 2-րդ տան բնակիչ **Նարեկ Սարգսյանի** 2024 թվականի հունվարի 23-ի թիվ 363-16 և Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի 3-րդ թաղամասի 13-րդ շենքի 10-րդ բնակարանի բնակիչ **Անյուտա Անտոնյանի** 2024 թվականի փետրվարի 08-ի թիվ 610-16 դիմումները ֆինանսական աջակցություն հատկացնելու մասին, ***առաջարկում եմ.***

1. Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729«Այլ նպաստներ բյուջեից»սինթետիկ հաշվից 150.0 հազ. դրամ հատկացնել **Մարիամ Հարությունյանին:**
2. Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729«Այլ նպաստներ բյուջեից»սինթետիկ հաշվից 150.0 հազ. դրամ հատկացնել **Սոս Գրիգորյանին :**

3. Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից»սինթետիկ հաշվից 200.0 հազ. դրամ հատկացնել **Նարեկ Սարգսյանին :**

4. Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից»սինթետիկ հաշվից 150.0 հազ. դրամ հատկացնել **Անյուտա Անտոնյանին :**

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Ավագանու անդամ Դ. Պապոյանը առաջարկեց Ն.Սարգսյանին հատկացվող 150.0 հազ դրամը ավելացնել ևս 50.0 հազ. դրամով:

Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան՝

Քվեարկության եմ դնում որոշումը առաջարկված տարբերակով:

Կողմ- 25 դեմ- 0 ձեռնպահ-0

Լսեցին.

9. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին:

/Զեկ. Ս.Վարդանյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, 77-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, Չարենցավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Տալ համաձայնություն Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանը 2 (երկու) տարի ժամկետով, անհատույց օգտագործման իրավունքով, տրամադրելու՝ համաձայն ներքոնշյալ քաղաքացու դիմումի:

Հ/Հ	Անուն ազգանուն	հասցե
1.	Սվետիկ Գինոյան	ք.Չարենցավան, 4-րդ թաղամաս, 25-րդ շենք, բնակարան 7

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան՝

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 25 դեմ- 0 ձեռնպահ-0

Լսեցին.

10.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանները նվիրատվության եղանակով վարձակալին օտարելու համաձայնություն տալու մասին:

/Զեկ. Ս.Վարդանյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով , 77-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերով և համաձայն Չարենցավան համայնքի ավագանու 2022 թվականի հուլիսի 15-ի թիվ 49 որոշման,***առաջարկում եմ.***

1. Տալ համաձայնություն համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանները նվիրատվության եղանակով վարձակալին օտարելու՝ համաձայն ներքոնշյալ քաղաքացիների դիմումների:

Հ/Հ	ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ	ՀԱՍՑԵՆ	ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ	ԻՆՉ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ Է ՀԱՏԿԱՑՎՈՒՄ	ՀԱՏՈՒՑՄԱՄԲ ԿԱՄ ԱՆՀԱՏՈՒՅՑ
1.	Արսեն խոջայան	3-1-22	7 700 000	Սեփականություն	Անհատույց
2.	Մարինե Բրուտյան	4-25-11/12	6 200 000	Սեփականություն	Անհատույց
3.	Հարություն Վարդանյան	6-29-77/78/79	11 700 000	Սեփականություն	Անհատույց
4.	Ալեքսան Սայադյան	3-1-36	2 000 000	Սեփականություն	Անհատույց
5.	Գուլյա Դանիելյան	3-1-65	2 000 000	Սեփականություն	Անհատույց
6	Ռոզա Ղահրամանյան	7-18-29	13 600 000	Սեփականություն	Անհատույց

2. Համայնքի ղեկավարի կողմից գույքագրման փաստաթղթերում կատարվելիք փոփոխությունները ներկայացնել օտարման գործընթացն ավարտելուց հետո:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան՝

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 25 դեմ- 0 ձեռնպահ-0

Լսեցին.

11. Քաղաքացի Կարեն Գալստյանին հողի հարկի արտոնություն տալու մասին:
/Զեկ. Բ.Բալբաբյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N822-Ն որոշմամբ սահմանված կարգի 5-րդ և 6-րդ կետերի պահանջներով, Հողի հարկի մասին օրենքի 10-րդ հոդվածով և հաշվի առնելով Կարեն Գալստյանի դիմումը.***առաջարկում եմ.***

1. Կարեն Գալստյանին՝ որպես նոր հիմնված հնդավոր այգի (ազնվամորու) երեք տարի ժամկետով (2023, 2024, 2025 թվականների համար՝տարեկան 106821 ՀՀ դրամ) ազատել հողի հարկի պարտավորությունից, նկատի ունենալով, որ այդ այգիները ամբողջովին բերքատու կլինեն 3 տարի հետո /ըստ ագրոտեխնիկական ցուցանիշների/:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան՝

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-25 դեմ- 0 ձեռնպահ-0

Լսեցին.

12. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքում նոր առաջացած փողոցը հաստատելու մասին:

/Զեկ. Բ.Բալբաբյան/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ սահմանված կարգի պահանջներով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ և 35-րդ հոդվածի 21-րդ կետերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, ***առաջարկում եմ.***

1. Նոր առաջացած փողոցը հաստատել որպես՝ Չարենցավան համայնք քաղաք Չարենցավան Եսայան փողոց 2-րդ փակուղի /կցվում է հատակագիծը/:
2. Ուժը կորցրած ճանաչել Չարենցավան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքում նոր առաջացած փողոցները հաստատելու մասին» թիվ 114-Ա որոշման 2-րդ կետը:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակկոմունալ տնտեսության բաժնի պետ Բենիկ Բալբաբյանի վրա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան՝

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 25 դեմ-0 ձեռնպահ-0

Լսեցին.

13. Եվրամիության (ԵՄ) կողմից իրականացվող EU4CULTURE նախագծի շրջանակներում Չարենցավան համայնքի «Արամ Խաչատրյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի կողմից ներկայացված «Արվեստի ամառային ճամբար» (ART SUMMER CAMP) դրամաշնորհային ծրագրի՝ համայնքի բյուջեից վերադարձի պայմանով համաֆինանսավորմանը համաձայնություն տալու մասին:

/Զեկ. Ա.Ծերունյան/

1. Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 5-րդ կետերով սահմանված դրույթները, 13-րդ հոդվածի 10-րդ մասը, ***առաջարկում եմ.***
2. Համաձայնություն տալ ԵՄ-ի կողմից իրականացվող EU4Culture ծրագրի շրջանակներում Չարենցավան համայնքի «Արամ Խաչատրյանի անվան մանկական երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի կողմից ներկայացված «Արվեստի ամառային ճամբար» (Art Summer Camp) դրամաշնորհային ծրագրի իրականացման համար անհրաժեշտ համաֆինանսավորմանը համայնքի բյուջեից՝ 1650000 (մեկ միլիոն վեց հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամի չափով, վերադարձի պայմանով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու համայնքի զարգացման ռազմավարության և ծրագրերի մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Ավագանու անդամներին հետաքրքրող, ծրագրի վերաբերյալ բոլոր բարձրացված հարցերին Ա.Ծերունյանը տվեց պարզաբանումներ, հանգամանորեն ներկայացնելով «Արվեստի ամառային ճամբար» ծրագիրը:

Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան՝

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 20 դեմ-2 ձեռնպահ-3

Լսեցին.

14. Եվրամիության (ԵՄ) կողմից իրականացվող EU4CULTURE ծրագրի Առաջարկների Սահմանափակ Կանչին մասնակցելուն, ներկայացվող ծրագրի իրականացումը պատվիրակելուն և համաֆինանսավորումն ապահովելուն համաձայնություն տալու մասին:

/Զեկ. Ա.Ծերունյան/

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 5-րդ կետերով սահմանված դրույթները, 13-րդ հոդվածի 10-րդ մասը, ***առաջարկում եմ.***

1. Համաձայնություն տալ Չարենցավան համայնքի մասնակցությանը՝ ԵՄ կողմից իրականացվող EU4Culture նախագծի Առաջարկների Սահմանափակ Կանչին, ներկայացնելով «Մշակույթի զարգացում. կարողությունների հզորացում և համագործակցության խթանում Չարենցավանում» ծրագիրը:
2. Համաձայնություն տալ դրամաշնորհատուի կողմից ծրագրի հաստատման դեպքում դրա իրականացումը պատվիրակելու Չարենցավան համայնքի «Արամ Խաչատրյանի անվան մանկական երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ին:

3. Համաձայնություն տալ ծրագրի հաստատման դեպքում Չարենցավան համայնքի 2024 թվականի բյուջեից կատարելու համապատասխան համաներդրումը՝ վերադարձի պայմանով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու համայնքի զարգացման ռազմավարության և ծրագրերի մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան՝

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 22 դեմ-0 ձեռնպահ-3

Լսեցին.

15. Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի հերթական թիվ 3 նիստի գումարման օրը սահմանելու մասին:

/Զեկ. Ս.Մուրադյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով , ***առաջարկում եմ.***

1. Կոտայքի մարզի օր և ժամը սահմանել Չարենցավան համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի հերթական թիվ 3 նիստի 2024 թվականի մարտի 15-ը, ժամը 12:00:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան՝

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 25 դեմ-0 ձեռնպահ-0

Չարենցավան համայնքի ավագանու անդամներ՝

Առաքելյան Նորայր
Բաբայան Արայիկ
Բաբայան Նարեկ
Բաղդասարյան Սահակ

Գալստյան Արթուր

Գասպարյան Մելիք

Գևորգյան Գևորգ

Դավթյան Կարեն

Եփրեմյան Բաբկեն

Թադևոսյան Նունե

Խաչատրյան Արշակ

Խեչոյան Անահիտ

Հարոյան Լիլիթ

Ղամբարյան Գարիկ

Մակինյան Վարդան

Մալխասյան Նորիկ

Մուքայելյան Վալերի

Շահգալդյան Հակոբ

Պողոսյան Մնացական

Վարդանյան Նորայր

Վարդանյան Նորիկ

Վարդանյան Սարգիս

Վարդանյան Սևակ

Պալյան Գարիկ

Պապոյան Դավիթ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

Նիստն արձանագրեց Ս.Մուրադյան